,,մի Պարակիթ անուանեալ գեղջ (Տաշ-
,,բուռուն) ցԱրհամի գիւղ և անդր ցա-
,,ւերային Երշակաւանի. այսր կողման մար-
,,մին լերինս ունի առաւել խորաձոր տե-
,,ղիս և ծործորս բացեալս 'ի հեղեղաց և
,,'ի գետնաշարժութեանց. յորոց քարինք
,,անկեալք 'ի բարձրութեանցն կան այն-
,,պէս կուտակեալք. 'ի կողմանէ ասի
,,առաւել հնարաւոր է ընթացից մարդոյ
,,մի վեր 'ի լեառն։ Իսկ ստորոտքն արևել-
,,եան, հարաւային և արևմտեան կցեալք
,,են ընդ երից խոնարհ՝ լերանց աղխելոց
,,ընդ այլ լերինս։ Տարածութիւն ստորո-
,,տի լերինս դնին հնգօրեայ ճանապարհ
,,ձիաւոր առն։ Ի բարձրութեան դագա-
,,թան սորա անդր քան զսպառուած պա-
,,տառուածին են երեք ձիւնաթաղ բըլ-
,,րակք, հիւսիսայինն խոնարհ, իսկ միւս
,,երկուքն արևելեան և արևմտեան սրա-
,,ծայրք և անմատչելիք իսպառ. յորս իսկ
,,նոքին Պարոն Բարրօան և ընկերք իւր
,,չ'կարացին մատչել յամին 1829 յամ-
,,սեանն սեպտեմբերի. և 'ի ստորոտի անդ
,,բլրակացն, ուր կարացին ժամանել, կա-
,,ռուցին զփոքրիկ խաչ փայտեայ, յոր
,,մնդեալն էր տախտակ կապարեայ այսու-
,,գրուածովք։

,,Սոյն սա եղև ապաստանարան ամե-
,,նայն քրիստոնէից. ըստ հրամանի Ն-
,,որին Կայսերական Մեծութեան Ինքնա-
,,կալին ամենայն Ռուսաց Նիկոլայ Պաւ-
,,լովչին՝ քաջայաղթ սպառազէն բազկաւ
,,անպատմելի սպարապետին Պասկևչին
,,Երևանայ 1829 սեպտեմբերի 17-ին։

,,Առաւել 'ի պատառուածի անդ է հե-
,,ղեղ՝ հալոցք ձեանց, քան յայլ կողմ-
,,մանս, որ հոսեալ հասարակօրէն ընդ ձորն
,,և անցեալ զհիւսիսային կողմամբ աւա-
,,զանին աղբեր սրբոյն Յակոբայ և զհա-
,,րաւային կողմամբ Մենասականին նոյն
,,Սրբոյ՝ մտանէ 'ի գեղամէջ անդր Երկո-
,,ռայ, և դարձուցեալ զաղօրիսն՝ ի ջանէ
,,յոռոգումն արտօրէից և այգեստանեայց
,,այնր գեղջ։ Եւ երբեմն 'ի փլուզանիլ
,,և յանկանիլ լեռնանման մեծակուտակ
,,ձեան հիւսիսոյ 'ի կատարաձէ անտի պա-
,,տառուածին ընդ զառ 'ի վայրն, թնդիւն
,,և արձագանք մեծահնչիւն արձակի,
,,մինչ լսելի իսկ լինիլ 'ի դաշտամէջ անդր
,,հարուստ հեռաւորութեամբ, և այն
,,յորդահոսան հեղեղ՝ իւրով սընթա-
,,ցութեամբ երբեմն երբեմն ճնաս մեծ
,,գործէր գեղջն և անդաստանացն։

,, Այս գիւղ բազմամարդ և Մենաս-
,,տանն վերոյիշեալ Սրբոյն բնակչաք և ա-
,,նասնաք հանդերձ ծածկեցան ընդ քան-
,,զուածովք լերինն, ընդ ձեամբ, ընդ տա-
,,ռուցաք և ընդ խձովք և մեծամեծ քա-
,,րամբք՝ հոսելովք 'ի վերուստ անտի ընդ
,,զառ 'ի վայր հեղեղացն՝ 'ի շարժէն եղե-
,,ալոյ յանցեալ 1840 ամի 'ի 20-ն յունիսի։

(Մնացեալն է յետոյ։)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԶ-ՐՊ ԴԼԽԻՑ

Ի՞ՆՉՊԷՍ ՊԻՏՔ Է ՈՒՍՈՒՑԱՆԵԼ ԵՒ ՈՒՍԱՆԻԼ ԻՐԱԿԱՆ ՑԱՋՈՂՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ.

Ցանել և տնկել իմանալու համար պէտք է որոշեալ հմտութիւն և գիտութիւն ունենալ.

միայն ուսեալ այգեպանը գիտէ, թէ ի՞նչ, ո՞ւր, երբ և ի՞նչպէս պէտք է ցանել և տնկել։

Մենք ուրեմն պէտք է քննենք, թէ արդեօք հոգեկան ցանման և տնկման արուեստը կարող է այնպէս հիմնաւոր հաստատութիւն ունենալ, որ յաջողութիւնը անվրէպ և իրական լինի ապագայում։

Եւ քանզի այդ արուեստը հիմնուած է բնութեան օրէնքների վրայ, ուստի մենք պէտք է քննենք բնութեան ընթացքները, եղանակները, որ յետոյ գտնենք և արուեստը։ Մենք պէտք է զննենք, թէ ի՞նչպէս է աճում թռչունի ձագը. պէտք է մտախոհ լինինք, թէ ի՞նչպէս է բուսնում ծառը՝ ճարտար այգեպանի ձեռքի տակ. թէ ի՞նչպէս նկարիչը փոքր առ փոքր վերջացնում է իւր պատկերը, և թէ ի՞նչպէս ճարտարապետը հիմնարկում է և շինում է իւր տունը

Ի՞նչ որ յայտնի է բնութեան և ճարտարութեան մէջ, և ինչ որ յաջողութիւն ունի, մենք պէտք է նորանից գտնենք և հանենք այն անյայտը, որ մեր խնդիրը պահանջում է։

ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆ

Բնութիւնը բարեպատեհ ժամանակ է ապրում.

Եթէ թռչունը կամենում է բազմացնել իւր ցեղը, նա իւր գործը ձմեռը չի սկսում, երբ բոլոր բնութիւնը սառած է. և ոչ ամառը, երբ բոլոր բնութիւնը թուլացած է տօթից. և ոչ աշունքին, երբ արեգակի զօրութիւնը նուազում է. այլ գարունքին, երբ արեգակը բոլորին կեանք ու զօրութիւն է տալիս։ Մի և նոյն ժամանակ թռչունը աստիճան առ աստիճան է գործ կատարում։ Գարունքի առաջին օրերը, երբ դեռ հով է, ձուերը աճում են նորա մարմնի մէջ, ուր նոքա պատրաստուած են յուրտից. բայց երբ օրերը տաքանում են, նա բոյնի մէջ ձուերը ածում է և ձագեր է հանում։

Այգեպանը նոյնպէս իւր գործերը կատարում է բարեպատեհ ժամանակին։ Նա ձմեռը չի տնկում, վասն զի այն ժամանակ արմատը հիւթալից չէ. և ոչ ամառուայ կէսին, վասն զի հիւթը այն ժամանակ տարածուեցաւ բոյսի վերին մասերում. և ոչ աշունքին, վասն զի այն ժամանակ հիւթը վերադառնում է արմատի մօտ, այլ գարունքին. վասն զի այն ժամանակ հիւթը վերը բարձրանում և շառաւիղներ է արձակում։ Ցնոյց նա նմանապէս ժամանակին է աղբ ածում հողի վերայ, ջրում և կտրում բոյսերը ևն։

Բանական ճարտարապետը նախ գծագրում է շինութեան յատակագիծը (պլան), այնուհետև պատրաստում է ատաղձ և առհասարակ շինութեան բոլոր նիւթը. յետոյ նա հիմքն է ձգում. և երբ արդէն վերջինը հաստատեց, միայն այն ժամանակ սկսում է պատերը և միւս մասները բարձրացնել։

Այս կանոնի ընդ դէմ, այսինքն պատշաճ ժամանակին գործելու ընդ դէմ՝ ուսումնարաններում կրկնակի մեղանչում են՝ նախ, որ բարեպատեհ ժամանակ չեն ընտրում ոգւոյ վարժութիւնների համար. և երկրորդ, որ այդ վարժութիւնները օրինաւոր չեն կարգաւորուում, որպէս զի հետզհետէ գործ դրուին։ Դեռահաս մանուկներին կարելի չէ ուսուցանել, վասն զի բանականութեան արմատը դեռ շատ խորը ծածկուած է։ Ալեւորին նոյնպէս կարելի չէ ուսուցանել, վասն զի նորա բանականութիւնը և յիշողութիւնը թառամում են։ Միջին հասակին կրթութիւն տալը շատ դժուար է, վասն զի ոգին շատ ցրուած է։ Միայն մանկութեան և պատանեկութեան հասակները բարեպատեհ են կրթութեան համար, վասն զի այդ ժամանակ են աճում կեանքի և ոգւոյ զօրութիւնները։

Ուրեմն մարդուս կրթութիւնը պէտք է սկսուի կենաց գարունքին, այսինքն մանկութեան ժամանակ։ Մանկութիւնը գարունքի նման է, պատանեկութեան հասակը ամառուայ նման է, այրականը՝ աշունքին, իսկ ծերութիւնը՝ ձմեռուան։ Կրթութիւնը պէտք է տրուի առաւօտեան ժամերին, վասն զի օրուայ ժամանակները համապատասխան են տարուայ ժամանակներին։ Առաւօտը՝ գարունք է, կէսօրը՝ ամառ, երեկոյն՝ աշունք, իսկ գիշերը՝ ձմեռ։ Եւ բոլոր ուսանելի բաները պէտք է կարգաւորուած լինի հետևաբար և խիստ աստիճան առ աստիճան կերպով, որպէս զի մանուկները ուսանին միայն այն, ինչ որ ըմբռնելի է նոցա հասկացողութեան։

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ԱՌՈՒԹԻՒՆԸ ՀԻՆԳԻՆ ՆՈՒՄԻ ՀԱՄԱՐ ԵՂԱՐՁԱԾՈՒ, ՆՈՐԱՆ ՈՐԴԻՆ՝ ՅԻՇԵՑԵՑԵՔ ՄԱՅԻՆ ԲՆԱՑԱ ՀՈՒՄԸ ՉԻ ԽՈՇԵԼ։

Թուշնի մէջ արիւնից կազմուում է սաղմը (ծնելու ձագը), յետոյ նա իւրեան համար բոյն է շինում, որ այն տեղ ձուկը ածէ և ձագեր հանէ

Ճարտարապետը ընութեան նոյն օրէնքին է հետևում։

Ուսումնարաններում այս կանոնի ընդդէմ մեղանչում են նորանով, որ պաշարի համար հարկաւոր միջոցներ չունին, այսինքն՝ գրքեր, տախտակներ, վայելչագրութիւններ, պատկերներ և այլն։

Մեղանչում են դարձեալ, որ դասագրքերի մէջ չեն հետևում բնական կարգին, խնամք չեն քաշում՝ որ ձեռք բերուի նախ նիւթը, և ապա տրուի այն նիւթին ձև։

Այսպէս, զորօրինակ՝ ուսումնարաններում նախ լեզու են ուսուցանում, և ապա իրեր։ Նախ քան իրերի հետ ծանօթացնելը, ամբողջ տարիներ պարապեցնում են երեխացը խօսողութեան վարժութիւններով։ Այն ինչ իրերն են միայն էական, իսկ բառերը՝ պատմական. իրը մարմին է, բառը՝ զգեստ. իրերը՝ միջուկ են, բառերը՝ կճիպ։ Ուստի նախ պէտք է իրերը ուսուցանել, և ապա բառեր։

Դարձեալ մեղանչում են, որ լեզուի դասերը քերականութիւնից են սկսում՝ և ոչ մատենագրից կամ պարտադրաշաճ կազմուած իրական բառարանից։ Մատենագիրները և բառարանները լեզուին նիւթ են տալիս, այսինքն բառեր. իսկ քերականութիւնը տալիս է ձև, ստուգաբանութեան և համաձայնութեան օրէնքներ։

Վերջապէս՝ նախ առաջարկում են վերացեալ կանոններ, և ապա տալիս են օրինակներ

Սոցանից հետևում է՝ որ դասատուութեան եղանակը՝ հիմքից սկսած՝ պէտք է փոխուի, և որ հարկաւոր է, 1) պաշարի համար ունենալ բոլոր դասական միջոցները, 2) իրերը ուսուցանել նախ քան լեզուն, 3) լեզուն ուսուցանել և ոչ թէ քերականութիւններով, այլ մատենագիրներով։ 4) իրական գիտութիւնները աւանդել նախ քան զվերացեալները, 5) օրինակները կանոններից առաջ տալ։

ԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ԱՌՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԳՈՅԱՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՐՈՒՄ Է ՍԻՆԳԻՆԻ ՆՈՒՄԻ, ՈՐ ՈՒՈՒԵԼ ՊԻՏԱՆԻ Է ԻՍՐ ԹԵՆԵՑ ՍԻՆ ՍԻՆԳԻՆ Է ՊԱՏՐԱՍՏԱՍՏՈՒՄ, ՈՐ ՊԻՏԱՆԻ ԴՈՒՌՆԱՅ։

Թուշունը ոչ թէ քարերի վերայ, այլ ձուերի վերայ է թխսում՝ որ նոցա մէջ պարունակած նիւթը այնքան ջերմացնէ, մինչև որ նորանից ծագ գոյանայ աշխարհք կանէ։

Ճարտարապետը ընտիր գերաններ է ջոկում, նոցա կտրատում է, տաշում է, կոկում է, միով բանիւ՝ իւր նիւթը ըստ կարգի յարմարեցնում է. յետոյ տեղը հարթում է և սկսում է շինութիւնը։

Նկարիչը նախ հարթում է իւր կտաւը, և ապա սկսում է նկարել։

Այգեպանը ամենակենդանի ծիլ է ընտրում, մշակում է հողը և յետոյ տնկում է ծիլը։ Քանի ծիլը չոր է արմատացած, այգեպանը ընաւ չի մտածում պատուաստելու մասին։ Եւ նախ կըսկսի պատուաստելը, յետոյ ծիլերը մինչև անգամ նորա բունի մի մասը կտրում է, որպէս զի հիւթը վեր բարձրանայ միայն պատուաստեալ ոստի մօտ։

Դաստիարակութիւնը այս կանոնի ընդդէմ նմանապէս մեղանչում է, 1) որ ծնողքը երեխաներին ուսումնարան չեն տալիս, որից պէտք է նոքա մտաւորական հիւթ ծծեն. 2) որ ուսուցիչքը աշխատում են գիտութիւնները, բարոյականութիւնը և բարեպաշտութիւնը պատուաստել յառաջ քան բունին արմատանալ, այսինքն՝ յառաջ քան ուսումնասիրութեան ունակ, 3) որ չեն կտրում և մաքրում նորարոյս ծառը, այսինքն՝ չեն ոչնչացնում թիւր հասկացողութիւնները, որ ապականում են մանուկների խելքը, և չեն ընտելացնում կարգ ու կանոնին։

ՉՈՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ԱՌՈՒԹԻՒՆԸ չի սիրում իւր գործողութիւնից ժամանակ, այլ ճշգրտութեամբ փայլ առ փայլ առաջ է գնում։

Թուշուն գոյացնելով, նա ստեղծում է ոսկորներ, ջղեր, երակներ, միսը—այդ ըոլորը մի առ մի, յետոյ կաշին, յետոյ փետուրները և այլն և այլն։

Ճարտարապետը նախ հիմքն է ձգում, ապա պատերն է շարում, ապա առաստաղի գերանները է դարսում, և վերջապէս շինում է տանիքը. այս բոլորը գործուում է մի առ մի հետզհետէ, և ոչ թէ միանգամից։

Նկարիչը մի անգամից 30 պատկեր չէ նկարում։

Այգեպանը ծառերը մի առ մի տնկում է։

Ուսումնարանների մեղրութիւնն այն է, որ նոքա կամենում են աշակերտներին մի անգամից շատ բան հաղորդել։ Աշակերտները պարտաւորած են մի անգամից ուսանել և Լատինական ու Յունական Քերականութիւն, և Ճարտասանութիւն, և բանաստեղծութիւն։ Ո՞վ չգիտէ դասական առարկաների այն փոփոխութիւնը, որ լինում է մի և նոյն օր։ Կօշկակարը օրը մի կօշկից աւելի կարող չէ կարել։

Այս տեղ հարկաւոր է նորոգութիւն։ Ով որ Քերականութեամբ է պարապած, նա չպէտք է տանջուի մի և նոյն ժամանակ տրամաբանութեամբ. ով որ տրամաբանութիւն է ուսանում, պէտք է Ճարտասանութիւնից ազատ լինի։ Ի վաղուց Սկալիգերը իրրև կանոն աւանդեց՝ "Մինը միւսից յետև", այդ պատճառով ինքն առաջինը այնքան շատ գիտութիւն ստացաւ։

Ապա ուրեմն հարկաւոր է հոգալ, որ ուսումնարաններում աշակերտները որոշեալ ժամանակին ոչ ոչնչին դէմ դի որ և իցէ նոցա մոտին յարմար բան։

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Բնութիւնը իւրաքանչիւր իւր արարածոցը ինչ է տուել, և ոչ արհամարհել։

Նա՝ թռչունին նախ և առաջ չի տալիս մագիլներ, փետուրներ և այլն ուրիշ արտաքին պարագաներ, բայց նորան նէրքինից է սոեղծում։

ՎԵՑԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Բնութիւնը իւր բոլոր գոյացութիւնները ընդհանուրից է սկսում և վերջանում է մասնաւորով։

Թռչուն գոյացնելով, նա նախ ջերմացնում է ձուի բոլոր զանգուածը, և յետոյ, երբ արդէն ջերմութիւնը գրգռուած է ու շարժողութիւնը սկսուեցաւ, նա բոլոր զանգուածի միջից ջղեր է անցուցանում, որպէս զի ամբողջ թռչունի գծագրութիւնը, այսինքն գլուխը, թևերը, ոտները իրանը կարողանան աճել, և միայն վերջը գոյացնում է բոլոր մասնաւորութիւնները։

Ճարտարապետը ևս այս կանոնին է հետևում, նախ նա պատրաստում է յատակագիծը կամ գաղափարը, յետոյ հիմքն է ձգում ևայլն. և ապա վերջապէս մասնաւորութիւնները կարգի է բերում, այսինքն՝ պատուհանները, դռները, ևայլն. և միայն վախճան պսակելու ժամանակ նա սկսում է զարդարանքները։

Նոյնը առնում է և նկարիչը, նա նախ չի նկարում ականջ կամ աչք, բայց բոլոր կերպարանքի կամ ձևի գծագրութիւնն է նշանակում ածուխով. Երբ որ գծագրութիւնը յաջողակ դուրս եկաւ, նա նոյնը ներկերով է զրոշմում, յետոյ որոշում է լոյս և ստուերը, և վերջապէս կատարելագործնում է մասնաւորութիւնը։

Քանդակագործը ևս այդպէս է կատարում իւր գործը։

Ուստի պարզ է, եթէ ուսումնարաններում գիտութիւններ ուսուցանելու ժամանակ, նախ քան գիտեցեաւ ընդհանուր գծագրութիւն տալը՝ ընդարձակօրէն հաղորդում են մանրամասնութիւնները։ Այսպէս և ոչինչ է ճարտարութիւններ և լեզուներ ուսուցանել, նախ քան նոցա սկզբունքներ և հիմունքներ տալը*)։

Այս տեղ հարկաւոր է նորոգութիւն՝ Ա.) նախ և առաջ աշակերտին պէտք է աւանդուի նոցա բովանդակ կրթութեան հիմունքը։ Դասական առարկաները այնպիսի կարգի պէտք է բերուին, որ յետին պարապմունքները իրապէս միանգամայն նոր կամ անակնկալ բան չլինին բայց մի-

(*) Այս կանոնը այնպէս, ինչպէս որ արտայայտուած է, երկմիտ է. այս կարդալով, սկսում կարծում են, թէ պէտք է սկսել ընդհանուրից եւ վերացեալից, այն ինչ Կոմենիուսը էապէս միայն պահանջում է, որ աշակերտին գլխաւոր սկզբունքները դեռ չտալով, չծանրացնել նորան մանրամասնութիւններով։

Ծ. Պ-ը-ն։

այն լինին առաջուց հաղորդուածը մանրամասն տեղեկութիւններ։ Բ.) Իւրաքանչիւր լեզուն, իւրաքանչիւր դիտութիւնը, իւրաքանչիւր ճարտարութիւնը պէտք է պարզ սկզբունքներով սկսուին, որպէս զի աշակերտները կարողանան ընդհանուրի գաղափար ստանալ. յետոյ հարկաւոր են առաւել լիութեամբ օրինակներ և կանոններ, վերջապէս — դրութիւն (система) և բացառութիւններ*)։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ԹՈՇՆԻՆԸ ՈՍՏԻՆ ՉԻ ԱՌՈՄ, ՈՒՂԻՂ ՈՐ ԻՐՈՒՆ ԱՌՈՄՆ Է ԸՆԻՆԱՌՈՄ։

Թոշնի կազմութիւնը իւր աստիճաններն ունի. ճարտարապետը և այգեպանը նմանապէս աստիճան առ աստիճան են ներգործում։

Մանկանց դաստիարակիչները սխալուում են, եթէ կարծում են, թէ իւրեանք չը պէտք է հետևին այդ օրէնքին։ Ցաւանի է, որ մի բանը հիմնուած միւսի վերայ, մի բանը հետևում է միւսին։

Ուստի ուսումը այնպէս պիտի կարգաւորած լինի, որ մի պարապմունքները պատրաստութիւն տան միւս պարապմունքների համար, և սոցա համար հարթ են ճանապարհ։ Ապա ժամանակը այնպիսի պիտի կարգաւորուած լինի, որ իւրաքանչիւր տարին, իւրաքանչիւր ամիսը, իւրաքանչիւր օրը և ժամը գործ դրուին որոշեալ պարապմունքին։ Վերջապէս պարապմունքների և ժամանակի այս կարգաւորութիւնը ճշդութեամբ պիտի կատարուին, ապա թէ ոչ՝ պակասաւոր և աղաւաղեալ հետևանքներ կը պատճառուին**)։

(*) Իսկութեամբ այս կանոնը չորրորդ կանոնի կրկնութիւնն է (տե՛ս վերը)։

(**) Այս մեկնութիւնից պարզապէս երևում է, որ Կոմենիուսը դիմում էր այն կէտին, որին մենք այժմ դիմում ենք, այսինքն, որ աշակերտների դիտութեան շրջանը աստիճան առ աստիճան ընդարձակուի, որ դասական առարկաների նիւթը հաղորդուի, եթէ կարելի է այսպէս ասել, կոնցենտրիքական (միակիտրոն) շրջաններով։

Ե. Պ—ն։

ՈՒԹԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ԹՈՇՆԻՆԸ ԻՐՈՒՆ Ի ԲԱՆ ՈՒՏԵՑ ՉԻ ԳՐԱՎՈՐՈՒՄ ՄԻՆՉ ՈՐ ԻՆՔՆՈՒՆ ԸՆԴԵՐՁՆԻ ՈՒՏՈՒՆԸ։

Ուսումնարանը կրթութեան վախճանին վնասում է եթէ չի կատարում այդ կանոնը։ Զորօրինակ, շատ վնաս է եթէ աշակերտները շուտ շուտ ընդհատում են իւրեանց ուսումնարանական պարապմունքները, կամ եթէ ուսումնարանը վազօրոք թողնում են։ Նմանապէս վնաս է եթէ վարժապետը աշակերտների հետ սկսում է երբեմն այս առարկան, երբեմն այն առարկան, նոցանից ոչ մինը, ոչ միւսը մինչև վերջնապատակը չը հասուցանելով։ Վերջապէս շատ վնաս է և այն, եթէ առանձին դասերի ժամանակ որ և իցէ բան սկսուում է և չէ վերջանում։ Երկաթը պէտք է ծեծել՝ քանի՛ տաք է. իսկ եթէ երկաթը շատ շուտ շուտ է տաքացնում, նա կորցնում է իւր ձգական զօրութիւնը։

Ուստի Ա.) աշակերտը պէտք է ուսումնարանում մնայ այնքան ժամանակ, մինչև որ չվերջացնի իւր կրթութիւնը. Բ.) նոյն իսկ ուսումնարանը անապատ տեղում պէտք է լինի՝ հեռու՝ որ և իցէ աղմուկներից. Գ.) պարապմունքները անընդհատ պէտք է շարունակուին՝ միանգամ ընդ միշտ ընդունած կարգով. Դ.) անժամանակ ուսումնարանից հեռանալը միանգամայն պէտք է հալածուի։

ԻՆՆԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ

ԹՈՇՆԻՆԸ ԿԵՌՆԻՆՔԸ ՀԵՌՆՈՒՄ Է ԱՄԵՆԱՅՆ ԸՆԱԼՈՒ ԱՂՏԵՑՈՒՆԵՐԻՑ։

Թոշունը իւր ձագերին պահպանում է հողմից, անձրևից, և վնասակար միջատներից։

Նկարիչը նոր նկարած պատկերը պահպանում է թափանցիկ հողմից, ջերմութիւնից, փոշիից և ն.

Այգեպանը բոյսերը պահպանում է այծերից և նապաստակներից և ն.

Ուստի մեծ անխնդրութիւն կը լինի հէնց սկզբում երեխաներին հաղորդել դիտութեան որ և իցէ մասի քննութիւնը (կրիտիկայ), և ուսած առարկայի մասին երկմտութեան սերմ ցանել նոցա հոգւոյ մէջ։

Ուստի ցանկալի է Ա.) որ աշակերտները ուրիշ գրքեր չունենան՝ բացի նորայից՝ որք նոցա դասատան մէջ ընդունած են, և Բ.) որ այդ գրքերի պարունակութիւնը լինի միայն բոլոր այն՝ ինչ որ դուստ էական մասն է ուսանելի նիւթի մէջ։

(Շարունակ.)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ Ի ԲԵՌԼԻՆ։

(Շարունակ.)

Պ. Զայֆարթի դէմ խօսեց Պ. Շնֆեր Բեռլինցին. որ առաջ մանկավարժ էր, յետոյ Աստուածաբան դարձաւ և այժմ Բեռլինի աղատակրօն ընկերութեանց քարոզիչն է։ Նորա խօսելու ժամանակ Պ. Նախարարը հեռացաւ դահլիճէն։

Պ. Շնֆեր.—Ժողովիս մէջ խռովութիւն ձգել չըկամիմ, այլ Վարժապետի խօսքերը միտս բերելով՝ կասեմ,—ո՛չ եկի խաղաղութիւն արկանել, այլ սուր, սուր արդար գործի համար։ Պատուելի Նախարդիս մտքերը չեմ կրնար ես ընդունել։ Արտաքին մի իրողութեամբ արդէն մեք հակառակ եմք միմեանց. նա առաջ Աստուածաբան էր և այժմ մանկավարժ դարձաւ, իսկ ես մանկավարժ էի առաջ և այժմ Աստուածաբանութեան ձեռն արկի— կեանքը ստիպեց զիս այդ անելու։ 1849 թուականէն մինչև 1856 թ. վեց տարի վարժապետ էի ես ստորնակարգ մի դպրոցի մէջ, բայց Պրուսական և եուզրաթիվներու (*) տակ պաշտօն վարելու ախորժակս վերջապէս հատաւ։ Ես խնայեայ, թէ ի՞նչ դառն լուծ դրուած է վարժապետի վրայ . . . (անհանգստութիւն)։ Պարոնայք և ընկերք իմ, ես ունիմ իրաւունք այդ ասելու — (Ձեզ տեսնելուն, սուրմանդ + ս բաղձանք. Նախագահը զանգը հարկանէ)։

Նախագահ. — Պարոնայք իմ, նախ և առաջ կը խնդրեմ հանգստութիւն պահպանել, ինչպէս որ ժողովին մէջ միշտ սովորութիւն եղած էր. և ապա կը խնդրեմ յարգելի Առենախօսէն, որ նա իր հակառակներու դէմ աւելի մեղմիւ խօսի։

Շնֆեր. — Առանց հակառակութեան ձգմարիտ կեանք չըկայ։ Մեծարգոյ նախորդս ասաց, թէ մեք միտք չունինք եկեղեցական գործերու մէջ խառնուելու, այլ միայն մանկավարժութիւն կը ցանկամք ուսանել։ Իսկ ես կասեմ — մանկավարժութիւնը նիւթապէս և բարոյապէս այնպէս սերտ կապուած է եկեղեցւոյ հետ, որ մեք կարող չենք մեր աչքերը փակել և չըտեսանել, թէ ի՞նչ կանէ եկեղեցին, ի՞նչ կըպատահի նորա մէջ և ի՞նչ զիրք կըրնէ մեզ դէմ։ Ի զուր է կարծել, որ մեք վտանգէն զերծուած կրլինինք, եթէ ջաղամ թուչնոյ նման գլուխներս աւազի մէջ խունք ու մտածենք, որ եթէ մեք վտանգը չենք տեսներ, ուրեմն իրօք ապահովինք։ Մեք զումարուած ենք այս տեղ Գերմանացւոց մանկավարժից մտքերը ազատ հոչակելու և այդ պատճառով իմ վճռիս վրայ ես հաստատ կըմնամ։

Ինձմէն առաջ Պ. առենախօսը մի հարց արաւ, թէ ի՞նչ կը ցանկայ Գերմանական մանկավարժութիւնը, և պատասխանեց.— Կրթումն մարդկային ընդունակութեանց աստուածատուր որոշմանը յարմար։ Այդ բանին ես ևս համաձայն եմ, միայն կը ցանկայի, որ ասուէր — Բնատուր մարդկային որոշմանը յարմար (ընդդիմութիւն և հաճութիւն)։ Նա կրկնեց նոյնպէս — (անհանգստութիւն)։

Նախագահ. — Ես կըխնդրեմ, որ զուք թոյլ տաք յարգելի առենախօսին իւր 10 բոպէն ազատ գործադրելու։

Առենախօսը շարունակելով — Նա ասաց նոյնպէս, որ մեք չըկամինք վիճաբանել զաւանական դպրոցի և դպրոցի ու եկեղեցւոյ բաժանման վերայ, որովհետև դաբա արդէն վճռած խնդիրներ են։ Վայ մեզ, ընկերք իմ եթէ մեք այդ կարծիքն իրօք ընդունինք . . . . . Ամբիոնիս վրայ խօսք եղաւ Պրուսիոյ ու Գերմանական մանկավարժութեան

(*) Այդպէս կը կոչուին Պրուսսիոյ դպրոցական օրէնքները, որք իրենց յետադէմ ուղղութեամբ ներկայ ժամանակիս ոգւոյն այլ ևս չի համապատասխանելով, արդէն փոխուելու վրայ են։ 1848 թուականէն յետոյ Ռոմեական հոգեւորականներն ու Ռէակցիոներ կառավարութիւնը կամեցած էին այդ օրէնքներով ազգային վարժարանը ո՛րքան կարելի է, ճնշել։

Փ. Ղ.